

Խմբագրված է՝ «Շիրակի Մ. Նալբանդյանի անվան
պետական համալսարան» հիմնադրամի
Գիտական խորհրդի՝ 2022 թ.-ի դեկտեմբերի 26-ի նիստում
Գիտական խորհրդի նախագահ՝ _____ Ե. Սերոբյան

Հաստատված է՝ «Շիրակի Մ. Նալբանդյանի անվան
պետական համալսարան» հիմնադրամի
Գիտական խորհրդի՝ 2021 թ.-ի փետրվարի 22-ի նիստում
Գիտական խորհրդի նախագահ՝ _____ Ե. Սերոբյան

ԸՆԹԱՑԱԿԱՐԳ

**«ՇԻՐԱԿԻ Մ. ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ
ԳԻՏԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳՐԻ ՀՐԱՏԱՐԱԿՄԱՆ
(նոր խմբագրությամբ)**

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՑԹՆԵՐ

- 1.1 «Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի (այսուհետ՝ Համալսարան) Գիտական տեղեկագրի (այսուհետ՝ Գիտական տեղեկագիր) հրատարակման ընթացակարգով (այսուհետ՝ Ընթացակարգ) սահմանվում է Գիտական տեղեկագրում գիտական աշխատանքները տպագրության ներկայացնելու, դրանք գրախոսելու և հրատարակելու կարգը:
- 1.2 Համալսարանի Գիտական տեղեկագիրը հիմնադրվել է Գյումրու Մ. Նալբանդյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտի Գիտական խորհրդի կողմից 10.10. 2011թ.-ին:
- 1.3 Հիմնադրումից ի վեր Գիտական տեղեկագիրը գրանցված է պարբերականների միջազգային ստանդարտ համարակալման (ISSN) համակարգում և ունի ISSN համարանիշ (Էլեկտրոնային տարբերակ՝ 2738-2559, տպագիր տարբերակ՝ 1829-3808) *(Խմբագրված՝ Գիտական խորհրդի 2022 թ.-ի դեկտեմբերի 26-ի նիստում):*
- 1.4 Համալսարանի Գիտական տեղեկագիրը 2013 թ.-ից ընդգրկված է Հայաստանի Հանրապետության Բարձրագույն որակավորման կոմիտեի կողմից ընդունելի պարբերականների ցուցակում:

- 1.5 Համալսարանի Գիտական տեղեկագիրը հրատարակվում է տարին 2 համարով՝ յուրաքանչյուրը Ա (Մաթեմատիկական, բնագիտական, տեխնիկական գիտություններ, տնտեսագիտություն և աշխարհագրություն) և Բ (Հումանիտար ու հասարակական գիտություններ, դասավանդման մեթոդիկաներ) պրակներով:
- 1.6 Համալսարանի Գիտական տեղեկագրի Ա և Բ պրակների խմբագրական խորհուրդները (այսուհետ՝ Խմբագրական խորհուրդ) հաստատվում և անհրաժեշտության դեպքում փոփոխության են ենթարկվում Համալսարանի Գիտական խորհրդի որոշմամբ: Դրանցից յուրաքանչյուրի կազմերում պետք է ներառված լինեն գլխավոր խմբագիրը, գլխավոր խմբագրի տեղակալը, պատասխանատու քարտուղարը, առնվազն 2 գիտությունների դոկտոր և արտերկրի գիտական կամ կրթական կազմակերպության աշխատակից հանդիսացող, փիլիսոփայության դոկտորի (PhD) գիտական աստիճան ունեցող առնվազն 1 մասնագետ պարբերականի յուրաքանչյուր բնագավառի համար և Համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմից գիտական աստիճան ունեցող ներկայացուցիչներ *(Լրամշակված՝ Գիտական խորհրդի 2022 թ.-ի դեկտեմբերի 26-ի նիստում):*
- 1.7 Խմբագրական խորհրդի անդամների 10 տոկոսից ավելին վերջին 5 տարիներին պետք է ունենան տպագրված աշխատանք Scopus, Web of Science կամ РИНЦ շտեմարաններում ընդգրկված պարբերականներում *(Խմբագրված՝ գիտական խորհրդի 2022 թ.-ի դեկտեմբերի 26-ի նիստում):*
- 1.8 Խմբագրական խորհրդի անդամները չպետք է միաժամանակ ընդգրկված լինեն 4 և ավելի տեղական պարբերականների խմբագրական խորհուրդներում *(Խմբագրված՝ Գիտական խորհրդի 2022 թ.-ի դեկտեմբերի 26-ի նիստում):*
- 1.9 Պատասխանատու քարտուղարը վարում է մատյան, որտեղ գրառում է յուրաքանչյուր գործընթաց:

2. ԳԻՏԱԿԱՆ ՀՈՂՎԱԾՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ

- 2.1 Համալսարանի Գիտական տեղեկագրում հողված ներկայացնելու համար տարին 2 անգամ Խմբագրական խորհրդի կողմից հայտարարություն է տարածվում

Համալսարանում, որը տեղադրվում է նաև Համալսարանի պաշտոնական կայքում (<http://shsu.am/scientific-proceedings/>) և ֆեյսբուքյան էջում (*Լրամշակված՝ Գիտական խորհրդի 2022 թ.-ի ղեկտեմբերի 26-ի նիստում*):

2.2 Համալսարանի Գիտական տեղեկագրում հոդված կարող են ներկայացնել գիտության տարբեր ոլորտի ներկայացուցիչներ, դասախոսներ, ուսուցիչներ, այլ մասնագետներ, ուսանողներ: Ուսանողները գիտական հոդված կարող են ներկայացնել գիտական աստիճան ունեցող համահեղինակ(ներ)ի առկայության պարագայում (*Լրամշակված՝ Գիտական խորհրդի 2022 թ.-ի ղեկտեմբերի 26-ի նիստում*):

2.3 Համալսարանի Գիտական տեղեկագրում ներկայացվող հոդվածը պետք է պատրաստված լինի Հավելված 1-ում ներկայացված պահանջներին համապատասխան (*Լրամշակված՝ Գիտական խորհրդի 2022 թ.-ի ղեկտեմբերի 26-ի նիստում*):

2.4 Հոդվածը Խմբագրական խորհրդին հանձնելուց հետո 10 օրվա ընթացքում անցնում է տեխնիկական ստուգման փուլ, որի ընթացքում հատուկ ծրագրի միջոցով ստուգվում է նաև հոդվածի ինքնատիպության մակարդակը (*Լրամշակված՝ Գիտական խորհրդի 2022 թ.-ի ղեկտեմբերի 26-ի նիստում*):

2.5 Ընդունելի են համարվում այն հոդվածները, որոնք բավարարում են Հավելված 1-ում ներկայացված պահանջներին, և որոնց ինքնատիպության մակարդակը 80% և ավելի է (*Խմբագրված՝ Գիտական խորհրդի 2022 թ.-ի ղեկտեմբերի 26-ի նիստում*):

2.6 Այն հոդվածները, որոնք չեն բավարարում Հավելված 1-ում ներկայացված պահանջներին, վերադարձվում են հեղինակներին՝ տեխնիկական մասը համապատասխանեցնելու նպատակով (*Լրամշակված՝ Գիտական խորհրդի 2022 թ.-ի ղեկտեմբերի 26-ի նիստում*):

2.7 Եթե հոդվածի ինքնատիպության մակարդակը ցածր է 80%-ից, ապա կասեցվում է հոդվածի տպագրության գործընթացը՝ այդ մասին գրավոր տեղյակ պահելով հեղինակի գործատուին (*Խմբագրված՝ Գիտական խորհրդի 2022 թ.-ի ղեկտեմբերի 26-ի նիստում*):

2.8 Եթե հոդվածն անցնում է տեխնիկական ստուգման փուլը՝ բավարարելով նախատեսված պահանջներին, ապա հեղինակ(ներ)ը էլեկտրոնային փոստի միջոցով

իրագրվում է այդ մասին *(Խմբագրված՝ Գիտական խորհրդի 2022 թ.-ի դեկտեմբերի 26-ի նիստում)*:

3. ԳԻՏԱԿԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ԳՐԱԽՈՍՈՒՄ

- 3.1 Համալսարանի Գիտական տեղեկագրի տվյալ համարում տպագրության ներկայացված, տեխնիկական ստուգման փուլ անցած հոդվածները ներկայացվում են գրախոսման:
- 3.2 Հոդվածները գրախոսման են ներկայացվում Համալսարանի կամ Հավելված 2-ում ներկայացված ձևաթերթերով՝ կցելով Հավելված 3-ում ներկայացված գրախոսման նմուշը:
- 3.3 Տարվա ընթացքում տպագրության ներկայացված առնվազն 2 աշխատանք պետք է գրախոսվի արտերկրի մասնագետի կողմից *(Խմբագրված՝ Գիտական խորհրդի 2022 թ.-ի դեկտեմբերի 26-ի նիստում)*:
- 3.4 Գրախոսի կողմից հոդվածի վերաբերյալ կարծիքը ստանալուց հետո պատասխանատու քարտուղարն այն ներկայացնում է գլխավոր խմբագրին:
- 3.5 Գլխավոր խմբագրի իմացությամբ հոդվածի վերաբերյալ կարծիքը տրամադրվում է հեղինակ(ներ)ին՝ չհրապարակելով գրախոսի տվյալները:
- 3.6 Եթե հոդվածի վերաբերյալ գրախոսի կարծիքը դրական է, ապա այն ներկայացվում է Խմբագրական խորհրդի նիստին՝ որպես տպագրության երաշխավորված հոդված՝ խորհրդի կողմից վերջնական եզրակացություն ստանալու նպատակով:
- 3.7 Եթե հոդվածի վերաբերյալ գրախոսի կարծիքը բացասական է, ապա այն ներկայացվում է Խմբագրական խորհրդի նիստին՝ որպես տպագրության չերաշխավորված հոդված՝ խորհրդի կողմից վերջնական եզրակացություն ստանալու նպատակով:
- 3.8 Եթե գրախոսը հոդվածի վերաբերյալ կարծիքում կատարել է որոշակի դիտողություններ/առաջարկություններ, որոնք շտկելուց հետո այն նոր կարելի է երաշխավորել տպագրության, ապա հոդվածը վերադարձվում է հեղինակին՝ վերջինիս տալով որոշակի ժամանակ՝ գրախոսի կողմից կատարված

դիտողությունները հողվածում շտկելու, առաջարկությունները հաշվի առնելու և գրախոսին պատասխանելու համար:

3.9 Հեղինակի կողմից վերանայված հողվածը և գրախոսի կարծիքի պատասխանը ստանալուց հետո պատասխանատու քարտուղարը դրանք ներկայացնում է գլխավոր խմբագրին:

3.10 Գլխավոր խմբագիրը փոփոխված հողվածին և կարծիքի պատասխանին ծանոթանալուց հետո կարող է.

ա. Հողվածը ներկայացնել Խմբագրական խորհրդի նիստին՝ որպես տպագրության երաշխավորված հողված՝ խորհրդի կողմից վերջնական եզրակացություն ստանալու նպատակով:

բ. Հողվածը ներկայացնել Խմբագրական խորհրդի նիստին՝ որպես տպագրության չերաշխավորված հողված՝ խորհրդի կողմից վերջնական եզրակացություն ստանալու նպատակով:

գ. Հողվածն ուղարկել կրկնակի գրախոսման նույն կամ այլ մասնագետի մոտ: Այս դեպքում, եթե ժամկետների հետ կապված խնդիր է առաջանում, ապա տվյալ հողվածը կարող է տեղափոխվել հաջորդ համարում տպագրության համար:

4. ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԱՇԽԱՏԱՆՔԸ

4.1 Գրախոսման գործընթացի ավարտից հետո Գիտական տեղեկագրի տվյալ համարին տպագրության ներկայացված բոլոր հողվածները և գրախոսման արդյունքները տրամադրվում են Խմբագրական խորհրդի անդամներին:

4.2 Գիտական տեղեկագրի տվյալ համարին տպագրության ներկայացված բոլոր հողվածները և գրախոսման արդյունքները գլխավոր խմբագրի կողմից ներկայացվում են Խմբագրական խորհրդի նիստի ընթացքում՝ հողվածների տպագրության հետ կապված վերջնական որոշում ընդունելու նպատակով:

4.3 Եթե Խմբագրական խորհուրդը

ա. գրախոսի կողմից տպագրության երաշխավորված հողվածի վերաբերյալ ընդունում է դրական որոշում, ապա հողվածը դրվում է տպագրության:

բ. գրախոսի կողմից տպագրության երաշխավորված հոդվածի վերաբերյալ ընդունում է բացասական որոշում, ապա հոդվածը տրվում է հեղինակին՝ վերանայելու այն:

գ. գրախոսի կողմից տպագրության չերաշխավորված հոդվածի վերաբերյալ ընդունում է դրական որոշում, ապա հոդվածը տրվում է այլ մասնագետի՝ կրկնակի գրախոսելու:

դ. գրախոսի կողմից տպագրության չերաշխավորված հոդվածի վերաբերյալ ընդունում է բացասական որոշում, ապա հոդվածը հետ է վերադարձվում հեղինակին:

Վերոնշյալ ցանկացած դեպքում հեղինակ(ներ)ը էլ. փոստի միջոցով տեղեկացվում է որոշման մասին *(Լրամշակված՝ Գիտական խորհրդի 2022 թ.-ի դեկտեմբերի 26-ի նիստում)*:

4.4 Խմբագրական խորհրդի նիստը համարվում է վավեր անդամների առնվազն 2/3-ի մասնակցության պարագայում, իսկ որոշումներն ընդունվում են նիստին ներկա անդամների 2/3-ի կողմ քվեարկությամբ: *(Խմբագրված՝ Գիտական խորհրդի 2022 թ.-ի դեկտեմբերի 26-ի նիստում)*:

4.5 Խմբագրական խորհրդի նիստն արձանագրվում է գիտական քարտուղարի կողմից, իսկ նիստի արձանագրությունը ստորագրվում է բոլոր անդամների կողմից:

4.6 Պարբերականում տարվա ընթացքում տպագրվող նյութերի առնվազն 10 %-ը պետք է տպագրվի օտար լեզվով *(Խմբագրված՝ Գիտական խորհրդի 2022 թ.-ի դեկտեմբերի 26-ի նիստում)*:

4.7 Պարբերականում տարվա ընթացքում տպագրված այն աշխատանքները, որոնց հեղինակը կամ համահեղինակներից մեկն ունի գիտական աստիճան, պետք է կազմեն տպագրված նյութերի առնվազն 30 %-ը *(Խմբագրված՝ Գիտական խորհրդի 2022 թ.-ի դեկտեմբերի 26-ի նիստում)*:

5. ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳՐԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒՄ

5.1 Գրախոսման գործընթացն ավարտելուց հետո գլխավոր խմբագրի կամ գլխավոր խմբագրի տեղակալի կողմից զեկուցագիր է ներկայացվում Համալսարանի ռեկտորին՝ տպագրության երաշխավորված հոդվածների խմբագրման, սրբագրման,

տեխնիկական խմբագրման, տպագրման գործընթացը համապատասխան ժամկետներում կազմակերպելու վերաբերյալ:

5.2 Համալսարանի Գիտական տեղեկագրի նախնական օրինակի էլեկտրոնային տարբերակը մինչև տպագրվելը պատասխանատու քարտուղարի կողմից ուղարկվում է հեղինակների էլեկտրոնային հասցեներին՝ վերջնական ստուգման նպատակով:

5.3 Գիտական տեղեկագրի վերջնական ստուգումից հետո պատասխանատու քարտուղարը դիմում է Ազգային գրադարանի համապատասխան ստորաբաժանում՝ աշխատանքների համար DOI համարանիշերը ստանալու և Գիտական տեղեկագրում տեղադրելու նպատակով *(Խմբագրված՝ Գիտական խորհրդի 2022 թ.-ի դեկտեմբերի 26-ի նիստում):*

5.4 Տեղեկագրում ներառված յուրաքանչյուր աշխատանքի վերջում ավելացվում են այն ներկայացնելու, գրախոսման ուղարկելու և տպագրության ընդունելու ամսաթվերը *(Խմբագրված՝ Գիտական խորհրդի 2022 թ.-ի դեկտեմբերի 26-ի նիստում):*

5.5 Համալսարանի Գիտական տեղեկագրի վերջնական էլեկտրոնային տարբերակը մինչև տպագրվելը տեղադրվում է Համալսարանի կայքի համապատասխան բաժնում:

5.6 Համալսարանի Գիտական տեղեկագիրը հրատարակվում է էլեկտրոնային տարբերակով, և յուրաքանչյուր համարից տպագրվում է առավելագույնը 10 օրինակ, որոնք մուտք են արվում Համալսարանի Գրադարան-ուսումնագիտական խորհրդատվությունների, նորարարությունների և ՏՏ կենտրոն *(Լրամշակված՝ Գիտական խորհրդի 2022 թ.-ի դեկտեմբերի 26-ի նիստում):*

5.7 Գիտական տեղեկագրի մեկական օրինակ տրամադրվում է նաև գլխավոր խմբագրին, տեղակալին և պատասխանատու քարտուղարին:

5.8 Գիտական տեղեկագրի հրատարակված համարները էլեկտրոնային կամ տպագիր տարբերակով պետք է առաքվեն ԲՈԿ, Հայաստանի Ազգային գրադարան, մասնագիտական և գիտական գրադարաններ: *(Լրամշակված՝ Գիտական խորհրդի 2022 թ.-ի դեկտեմբերի 26-ի նիստում)*

6. ԵԶՐԱՓՈՒԿ ԴՐՈՒՅԹՆԵՐ

- 6.1 Սույն ընթացակարգում փոփոխություններ իրականացվում են ՇՊՀ-ի Գիտական խորհրդի որոշմամբ: *(Խմբագրված՝ Գիտական խորհրդի 2022 թ.-ի դեկտեմբերի 26-ի նիստում)*
- 6.2 Ընթացակարգի 1.6, 1.7, 1.8, 2.2, 2.4, 2.5, 2.7, 3.3, 4.5, 4.6, 5.4, 5.6 կետերը, ինչպես նաև Հավելված 1-ի 11, 21 կետերը ուժի մեջ են մտնում 2023 թ.-ի հունվարի 1-ից: *(Խմբագրված՝ Գիտական խորհրդի 2022 թ.-ի դեկտեմբերի 26-ի նիստում)*

ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳՐՈՒՄ ՀՈՂՎԱԾ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ
ՊԱՀԱՆՁՆԵՐ

Համալսարանի «Գիտական տեղեկագիր» հանդեսում հրատարակվելու համար ներկայացվող հոդվածը պետք է բավարարի ներքոնշյալ պահանջներին.

1. Հոդվածները ներկայացնել Word միջավայրում՝ ձևակերպված հայերեն, ռուսերեն կամ անգլերեն լեզուներից որևէ մեկով:
2. Թուղթը՝ A4 ֆորմատ, գրքային:
3. Լուսանցքները՝ վերնից, աջից, ձախից՝ 4 սմ, ներքևից՝ 5 սմ:
4. Տառաչափը՝ 12pt:
5. Տառատեսակը՝ հայերենի դեպքում՝ Sylfean, ռուսերենի, անգլերենի դեպքում՝ Times New Roman:
6. Միջտողային հեռավորությունը՝ 1pt:
7. Աշխատանքի բնագավառը, ՀՏԴ (համընդհանուր տասնորդական դասակարգման) նիշը (<https://udcsummary.info/php/index.php?lang=hy&pr=Y>, <https://teacode.com/online/udc/> կամ <http://www.prometeus.nsc.ru/biblio/class.ssi>) առաջին տողում՝ բնագրի լեզվով, գլխատառերով, հավասարեցումն ըստ լայնքի, թավ (*Լրամշակված՝ Գիտական խորհրդի 2022 թ.-ի դեկտեմբերի 26-ի նիստում*):
8. Աշխատանքի երկրորդ տողում խմբագրության կողմից լրացվում է DOI համարնիշը (*Խմբագրված՝ Գիտական խորհրդի 2022 թ.-ի դեկտեմբերի 26-ի նիստում*):
9. Աշխատանքի վերնագիրը երրորդ տողում՝ բնագրի լեզվով, գլխատառերով, հավասարեցումը՝ կենտրոնից, թավ (*Լրամշակված՝ Գիտական խորհրդի 2022 թ.-ի դեկտեմբերի 26-ի նիստում*):
10. Հեղինակ(ներ)ի ազգանունը, անվան ու հայրանվան առաջին տառերը չորրորդ տողում՝ բնագրի լեզվով, հավասարեցումը՝ կենտրոնից, թավ:
11. Բաց թողած 1 տողից հետո ներկայացնել աշխատանքի հակիրճ բնութագիրը բնագրի լեզվով, 150-250 բառի սահմանում, հավասարեցումը երկկողմանի, ուղիղ, որտեղ պետք է արտացոլվի աշխատանքի գիտական նորույթը (*Լրամշակված՝ Գիտական խորհրդի 2022 թ.-ի դեկտեմբերի 26-ի նիստում*):

12. Հաջորդ տողից հետո ներկայացնել աշխատանքի բանալի բառերը բնագրի լեզվով՝ մինչև 10 բառ, հավասարեցումը՝ երկկողմանի, ուղիղ:
13. Բաց թողած 1 տողից հետո ներկայացնել 9-12 կետերի տեղեկատվությունը ռուսերեն և անգլերեն: Եթե բնագրի լեզուն հայերենն է, հայերեն ու ռուսերեն, եթե բնագրի լեզուն անգլերենն է, հայերեն ու անգլերեն, եթե բնագրի լեզուն ռուսերենն է:
14. Բաց թողած 1 տողից հետո ներկայացնել նախաբանը՝ հոդվածի թեմայի շրջանակում գրականության վերլուծություն, աշխատանքի նպատակի շարադրում, արդիականության և նորույթի հիմնավորում (1 էջը չգերազանցող):
15. Բաց թողած 1 տողից հետո ներկայացնել հոդվածի հիմնական բովանդակությունը:
16. Աշխատանքում առկա փոխառված մտքերի ու պնդումների համար հղումների առկայությունը պարտադիր է: Հղումները տեքստում ներկայացնել քառակուսի փակագծերի մեջ՝ նշելով տվյալ աշխատանքի համարը գրականության ցանկից՝ [1], [5-7] (*Լրամշակված՝ Գիտական խորհրդի 2022 թ.-ի դեկտեմբերի 26-ի նիստում*):
17. Բանաձևային արտահայտությունները հարկավոր է իրականացնել *Math Type* կամ *MS Equation* բանաձևային խմբագրերի միջոցով: Համարակալվում են միայն այն բանաձևերը, որոնց ուղղված հղում կա տեքստում: Բանաձևերի համարակալումը հարկավոր է կատարել ըստ ամբողջ տեքստի (1), (2),..., համարակալումը՝ աջից: Բոլոր համարակալումները պետք է դասավորված լինեն միևնույն ուղղաձիգի վրա: Բանաձևերում կիրառվող բոլոր նշանակումները հարկավոր է պարզաբանել: Մեծությունների չափողականությունները պետք է համապատասխանեն СИ համակարգին:
18. Աղյուսակները պետք է ներկայացվեն հստակ տողերով և սյուներով՝ վերնագրված և համարակալված:
19. Գրաֆիկական նյութը և նկարները պետք է ներկայացվեն հստակ, վերնագրված և համարակալված: Դրանք հարկավոր է ներկայացնել jpeg կամ tiff ֆորմատներով (300dpi-ից ոչ պակաս):
20. Բաց թողած 1 տողից հետո ներկայացնել եզրահանգում (0,5 էջը չգերազանցող)՝ ներառելով աշխատանքում ստացված հիմնական արդյունքները:
21. Բաց թողած 1 տողից հետո անհրաժեշտության դեպքում ներկայացնել հետազոտության ֆինանսավորման աղբյուրը բնագրի լեզվով՝ հավասարեցումը

երկկողմանի, շեղ (օրինակ՝ *Հետազոտությունն իրականացվել է ՇՊՀ-ի կողմից տրամադրվող ֆինանսական աջակցության շնորհիվ՝ _____ գիտական թեմայի շրջանակներում*) (Խմբագրված՝ *Գիտական խորհրդի 2022 թ.-ի դեկտեմբերի 26-ի նիստում*):

22. Գրականության ցանկի տարրերը պետք է ներկայացնել ըստ ներքոնշյալ օրինակների.

Գրքերի օրինակներ.

1. Աղայան Է. Բ. Ընդհանուր և հայկական բառագիտություն: Երևան: ԵՊՀ հրատարակչություն: 1984: 370 էջ:
2. Будак Б. М., Фомин С. В. Кратные интегралы и ряды. М.: Изд.-во «Наука». 1967. 608 с.
3. Nowacki W. Theory of Asymmetric Elasticity. Oxford. Pergamon Press. 1986. 383 p.

Ամսագրերի/պարբերականների օրինակներ.

1. Ջրբաշյան Վ. Ա. Ռիսսի տիպի ներկայացումներ կիսահարթությունում մինիմալության հատկությամբ// Մաթեմատիկական բարձրագույն դպրոցում: 2011: Հատոր 7: № 1: էջ 5-17:
2. Пальмов В. А. Основные уравнения теории несимметричной упругости // Прикладная математика и механика. 1964. Т. 28. Вып. 6. С. 1117-1120.
3. Iesen D. The plane micropolar strain of orthotropic elastic solids // Archives of Mechanics. 1973. Vol. 5. № 3. P. 547-561.

Ժողովածուի օրինակներ.

1. Խաչատրյան Ն. Գ., Հարությունյան Ս. Ն. Հայերի մշակութային արժեքային կողմնորոշումների միջմշակութային ուսումնասիրություն // Տեսական և կիրառական հոգեբանության արդի հիմնախնդիրները: Միջազգային գիտաժողովի նյութեր: Երևան: «Էդիտ Պրինտ» հրատ.: 2011: էջ 80-83:
2. Маргарян Л. М. Построение прикладной динамической модели микрополярных упругих ортотропных тонких стержней асимптотическим методом // Труды международной конференции “Актуальные проблемы механики сплошной среды”. 08-12 октября. 2012. Цахкадзор, Армения. Т. 2. Ереван: Изд.-во ЕГУ АС. 2012. С. 19-23.
3. Kolesnikov A. M., Popov A. V. Pure bending of a pressurized curved tube // Proceedings of the International Conference Shell Structures: Theory and applications. 16-18 October,

2013. Gdansk, Poland. Taylor&Francis Press. London. 2014. P. 113-116.

Էլեկտրոնային աղբյուրի օրինակ.

1. <http://shsu.am/media/journal/2019n1a/bovandakutyun.htm> (05.05.2020)
23. Հոդվածի ծավալը չպետք է գերազանցի 10 էջը: Բոլոր էջերը պետք է համարակալվեն ներքևից՝ կենտրոնում:
24. Առանձին փաստաթղթով («տվյալներ հեղինակի մասին»), հոդվածի լեզվով հարկավոր է ներկայացնել սպառիչ տեղեկություններ հեղինակ(ներ)ի մասին՝ նշելով անուն, ազգանուն, հայրանուն (առանց համառոտագրելու), գիտական աստիճան, գիտական կոչում, հեռախոս, էլեկտրոնային հասցե (e-mail), աշխատավայր, այն հաստատությունը, որտեղ կատարվել է հետազոտությունը:
25. Հոդվածները հարկավոր է ուղարկել shsu.science@gmail.com էլեկտրոնային հասցեին:

Ստորև ներկայացվում է հոդվածի նմուշ:

ՀՏԴ ---

ԲՆԱԳԱՎԱՌԸ

DOI

**ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎԵՐՆԱԳԻՐԸ ՀԱՅԵՐԵՆ
Ազգանուն Ա. Ն.**

Հոդվածի հակիրճ բովանդակությունը հայերեն՝ հավասարեցումն ըստ լայնքի, ուղիղ, տառաչափը՝ 12pt, 150-250 բառի սահմանում, որտեղ պետք է արտացոլվի աշխատանքի գիտական նորույթը (*Լրամշակված՝ Գիտական խորհրդի 2022 թ.-ի դեկտեմբերի 26-ի նիստում*):

Բանալի բառեր՝ մինչև 10 հայերեն բառ, հավասարեցումն ըստ լայնքի, ուղիղ, տառաչափը՝ 12pt:

**ЗАГОЛОВОК РАБОТЫ НА РУССКОМ
Фамилия И. О.**

Հոդվածի հակիրճ բովանդակությունը ռուսերեն՝ հավասարեցումն ըստ լայնքի, ուղիղ, տառաչափը՝ 12pt, 150-250 բառի սահմանում, որտեղ պետք է արտացոլվի աշխատանքի գիտական նորույթը (*Լրամշակված՝ գիտական խորհրդի 2022 թ.-ի դեկտեմբերի 26-ի նիստում*):

Ключевые слова: մինչև 10 ռուսերեն բառ, հավասարեցումն ըստ լայնքի, ուղիղ, տառաչափը՝ 12pt:

**TITLE OF THE WORK IN ENGLISH
Surname N. Middle name**

Հոդվածի հակիրճ բովանդակությունը անգլերեն՝ հավասարեցումն ըստ լայնքի, ուղիղ, տառաչափը՝ 12pt, 150-250 բառի սահմանում, որտեղ պետք է արտացոլվի աշխատանքի գիտական նորույթը (*Լրամշակված՝ Գիտական խորհրդի 2022 թ.-ի դեկտեմբերի 26-ի նիստում*):

Key words: մինչև 10 անգլերեն բառ, հավասարեցումն ըստ լայնքի, ուղիղ, տառաչափը՝ 12pt:

Նախաբան՝ հողվածի թեմայի շրջանակում գրականության վերլուծություն, աշխատանքի նպատակի շարադրում, արդիականության և նորույթի հիմնավորում (1 էջը չգերազանցող):

Հողվածի հիմնական բովանդակությունը:

1. Բանաձևային արտահայտությունները հարկավոր է ներկայացնել Math Type կամ MS Equation բանաձևային խմբագրերի միջոցով: Համարակալվում են միայն այն բանաձևերը, որոնց ուղղված հղում կա տեքստում: Բանաձևերի համարակալումը հարկավոր է կատարել ըստ ամբողջ տեքստի՝ (1), (2),...: Համարակալումը՝ աջից: Բոլոր համարակալումները պետք է դասավորված լինեն միևնույն ուղղաձիգի վրա: Բանաձևերում կիրառվող բոլոր նշանակումները հարկավոր է պարզաբանել:

$$\frac{1}{r} \frac{\partial \sigma_{12}}{\partial \varphi} + \frac{1}{r} \sigma_{22} + \frac{\partial \sigma_{22}}{\partial r} - \frac{1}{r} \sigma_{11} = \rho \frac{\partial^2 V_2}{\partial t^2} \quad (1)$$


2. Մեծությունների չափողականությունները պետք է համապատասխանեն СИ համակարգին:

3. Աղյուսակները պետք է վերնագրվեն և համարակալվեն:

Աղյուսակ 1. Աղյուսակի վերնագիրը (Լրամշակված՝ գիտական խորհրդի 2022 թ. -ի ---- նիստում):

$\omega_1 \times 10^5$ (Гц)	$\omega_2 \times 10^5$ (Гц)	$\omega_3 \times 10^5$ (Гц)	$\omega_4 \times 10^5$ (Гц)
1 конечный элемент			
58.286	0.28855	4.73570	58.500
2 конечный элемент			
58.286	0.13384	4.73204	58.499
4 конечный элемент			
58.286	0.12912	4.73151	58.499
8 конечный элемент			
58.286	0.12899	4.73151	58.499

4. Գրաֆիկական նյութը պետք է լինի հստակ, չպահանջի լրացուցիչ խմբագրում: Այն հարկավոր է ներկայացնել jpeg կամ tiff ֆորմատներով (300dpi-ից ոչ պակաս): Գրաֆիկները ևս պետք է վերնագրվեն և համարակալվեն:



Նկար 1. Նկարի անվանումը (Լրամշակված՝ Գիտական խորհրդի 2022 թ.-ի դեկտեմբերի 26-ի նիստում)

5. Հոդվածում պարտադիր են հղումներ գրականության ցանկում նշված բոլոր աշխատանքներին՝ [1], [2-4]...

Եզրահանգում՝ աշխատանքում ստացված հիմնական արդյունքների ներկայացում (0,5 էջը չգերազանցող):

Ֆինանսավորման աղբյուր. հետազոտությունն իրականացվել է ԵՊՀ-ի կողմից տրամադրվող ֆինանսական աջակցության շնորհիվ՝ _____ գիտական թեմայի շրջանակներում) (Լրամշակված՝ Գիտական խորհրդի 2022 թ.-ի դեկտեմբերի 26-ի նիստում):

Գրականություն

1. Աղայան Է. Բ. Ընդհանուր և հայկական բառագիտություն: Երևան: ԵՊՀ հրատարակչություն: 1984: 370 էջ:
2. Ջրբաշյան Վ. Ա. Ռիսսի տիպի ներկայացումներ կիսահարթությունում մինիմալության հասկացմամբ// Մաթեմատիկական բարձրագույն դպրոցում: 2011: Հատոր 7: № 1: էջ 5-17:
3. Маргарян Л. М. Построение прикладной динамической модели микрополярных упругих ортотропных тонких стержней асимптотическим методом // Труды международной конференции “Актуальные проблемы механики сплошной среды”. 08-12 октября. 2012. Цахкадзор, Армения. Т. 2. Ереван: Изд.-во ЕГУ АС. 2012. С. 19-23.
4. <http://shsu.am/media/journal/2019n1a/bovandakutyun.htm> (05.05.2020)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ
ՄՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ Մ. ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
«ԳԻՏԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ» ՀԱՆԴԵՍԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

МИНИСТЕРСТВО ОБРАЗОВАНИЯ, НАУКИ,
КУЛЬТУРЫ И СПОРТА РЕСПУБЛИКИ
АРМЕНИЯ
ШИРАКСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ
УНИВЕРСИТЕТ ИМ. М. НАЛБАНДЯНА
РЕДАКЦИЯ ЖУРНАЛА “УЧЕНЫЕ ЗАПИСКИ”

MINISTRY OF EDUCATION, SCIENCE, CULTURE AND
SPORT OF THE REPUBLIC OF ARMENIA
EDITORIAL BOARD OF THE JOURNAL OF
“SCIENTIFIC PROCEEDINGS”

Հասցե՝ ՀՀ, ք. Գյումրի, 3126, Պ. Սևակ 4, հեռ. +374 312 6-64-80, էլ. հասցե. shsu.science@gmail.com
Адрес: РА, г. Гюмри, 3126, ул. П. Севак 4, тел. +374 312 6-64-80, эл. почта: shsu.science@gmail.com
Address: RA, Gyumri, 3126, P. Sevak 4, tel. +374 312 6-64-80, email: shsu.science@gmail.com

ՇԻՐԱԿԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳՐԻՆ
ՏՊԱԳՐՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՀՈԴՎԱԾԻ ԳՐԱԽՈՍՈՒՄ

1. Հոդվածի վերնագիրը _____

2. Հոդվածում տվյալ ուղղությամբ առկա գրականության վերլուծության գնահատում, հիմնավորում¹ _____

3. Հոդվածում ներկայացված թեմայի արդիականության և գիտական նորույթի գնահատում, հիմնավորում (*Լրամշակված՝ Գիտական խորհրդի 2022 թ.-ի դեկտեմբերի 26-ի նիստում*) _____

4. Հոդվածում կատարված հետազոտության տեսական և գործնական նշանակության գնահատում, հիմնավորում _____

¹ Նմուշում գնահատումն իրականացվում է հետևյալ համակարգով՝

- Անբավարար
- Բավարար

Յուրաքանչյուր հարցի գնահատման հետ կապված՝ գրախոսողը բերում է համապատասխան հիմնավորում:

5. Հոդվածի կառուցվածքի և բովանդակության գնահատում, հիմնավորում

6. Հոդվածում բերված եզրակացության (եզրակացությունների) գնահատում, հիմնավորում

7. Հատուկ նշումներ

8. Հոդվածը տպագրության երաշխավորելու հետ կապված որոշում

Օր, ամիս, տարի

Գրախոսի գիտական աստիճան և կոչում, ազգանուն, անուն, հայրանուն